ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ
<< 03 >> Մարտի 2020 թ. N 16

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ և 45-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ. 2387-Ն որոշումով, *ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, քանի որ կառույցները համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին*՝ հաշվի առնելով քաղաքացիների / Ֆրունզե Աթոյանի, Թամարա Վարդանյանի, Սահակ Աթոյանի, Ռուզան Աթոյանի, Ֆրունզե Աթոյանի, Մերի Աթոյանի/ դիմումը, <<ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ>> ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը, տեղագրական հատակագիծը, և անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 1676777 վկայականը և դատարանի վճիռը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի վարչական տարածքում քաղաքացիներ Աթոյան Ֆրունզե, Վարդանյան Թամարա, Աթոյան Սահակ, Սարգսյան Էլմիրա, Աթոյան Ֆրունզե, Աթոյան Մերի համատեղ սեփականությունը հանդիսացող (անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական թիվ 1676777) Գոգարան համայնք 5-րդ փողոց 21 հասցեում գտնվող 06-030-0007-0027 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի և զբաղեցրած հողամասի տարանջատման հատակագծերը դրանք համարելով առանձին գույքային միավորներ:

2.. 06-030-0007-0027 կադաստրային ծածկագրով 0,46222 հա հողամասից առանձնացված Սահակ Աթոյանին, Ռուզան Աթոյանին, Ֆրունզե Աթոյանին և Մերի Աթոյանին համատեղ սեփականության իրավունքով անցնող 0,30792 հա հողամասին՝ 26,86 քմ նկուղով, 53,48 քմ բնակելի տնով, 5,1 քմ հարթակով, 29,54 քմ կիսակառույցով, 38,79 քմ հացատնով, 31,86 քմ գոմով տրամադրել Գոգարան համայնք 5-րդ փողոց 21 փոստային հասցեն:

3. 06-030-0007-0027 կադաստրային ծածկագրով 0,46222 հա հողամասից առանձնացված Ֆրունզե Աթոյանին և Թամարա Վարդանյանին համատեղ սեփականության իրավունքով անցնող 0,1543 հա հողամասին՝ 11,29 քմ նկուղով, 27,21 քմ բնակելի տնով, 2,25 քմ հարթակով տրամադրել Գոգարան համայնք 5-րդ փողոց 21/1 փոստային հասցեն:

4. Օրինականացնել հողամասում առկա բոլոր շենք շինությունները:

5.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԱԼՈՅԱՆ